

քննադատութիւն, զրոական արժէք ունեցող գործեր եւ յօդուածներ գրողները միութեան անդամ կրնան ըլլալ»։ Ընտրուած է վարչական ժողով մը եւ պատուակալ նախագահ նշանակուած է Մուսթաֆա Քեմալը :

Թուրքերը կը գրաւին նաեւ հնագիտական պեղումներով եւ չեն բաւականանար եւրոպացի եւ ամերիկացի մասնագէտները միայն պաշտօնի հրաւիրելով :

Բժշկական յանձնարումը մը վերջերս սկըսած է գանազան ցեղերու ծագումը ուսումնասիրել, զանկերու վրայ կատարուած զննութիւններով : Պոլսոյ համալսարանին մէջ այս ճիւղին հետեւողները իրենց շրջանը աւարտելէն յետոյ, Անատոլի գանազան մասերը պիտի գրկուին, ցեղագրական ուսումնասիրութեան համար :

Բացի մասնաւոր եւ հասարակական ձեռնարկութիւններէ, գործավարները քննական պատշտներով եւ այցելութիւններով մօտէն եւ անձամբ կը հսկեն ամէն աշխատանքի : Դատական, Տնտեսական, Ներքին եւն. գործավարներու շարքին ահա՛ եւ Կրթականը, Նէճաթի պէյ, որ կը շրջի գաւառէ գաւառ, եւ Նիլոսէն Կեսարիա անցած է, ու քննած տեղին վարժարանները :

Այսպիսի շարժում եւ աշխատանք մինչեւ հիմա անկարելի էր գտնել Թուրքիոյ մէջ : Կը նշանակէ ուրեմն, որ էնկիւրիի մէջ կրթութիւնը, զարգացումը եւ յառաջդիմութիւնը երգուեալ բարեկամներ ունին, երբ մենք Քեմալը եւ քեմալական բարենորոգումները կը նսեմացրնենք կասկածներով եւ անհիմն չկամութիւններով :

Նախորդ գլուխին մէջ մենք բացատրեցինք՝ թէ ի՞նչ մեծ եւ ճակատագրական ազդեցութիւն բանեցնելու կոչուած է լատինական տառերու որդեգրումը եւ արարականին վերացումը, թուրք մշակոյթի, կրթութեան եւ վերածնունդի մարդերուն համար, մնալով գեղեցկազոյն յեղափոխութիւնն ու արդիական վերելակը :

Պաքուի մէջ հրատարակուող թուրքերէն

«Ենի Եօլ» թերթին մէջ ահա թէ ինչ կը գրէր Ատրպէյճանի թաթար կամ խարնեբէն Աղամալի օղլի, տակաւին 27 Մայիսին (1928), «Թըրքական նոր այբուբենի յաջողութիւնները» վերնագրով .

«Ըստ էութեան յեղափոխական գործողութիւն մը հանդիսացող այս կարելոր օրէնքը կուգայ լրացնելու եւ իսլամական փառած դիտութեան ճիրաններէն ազատելու արթնցող թուրք ժողովուրդի յեղափոխական այլ գործողութիւնները : Յեղափոխական այլ գործերն են՝ խալիֆայութեան ջնջումը, անբարոյականութեան ու վերջին աստիճանի յետադիմութեան յատկանիշը եզոզ կիներու չարշափի բարձումը, եւ վերջապէս մոլլաներու, սէյիտներու եւ միւս աստուածախնդիրներու արմատը հանդիսացող մէսնիտի բաժանումը պետութեան : Յեղափոխական այս բոլոր գործերէն յետոյ միայն հրապարակ գրուեցաւ արարական գիրերու հարցը : Արարական գիրերը ոչ-արար իսլամները գատապարտած են ենթարկուել արարական քաղաքակրթութեան եւ իշխանութեան : Ժամանակ մը հարիւր հազարաւոր իսլամներ աշխարհի բոլոր մասերէն ուխտի Կիւթային Մէքքէ, ուրտեղ միլիոններ կը վասնէին յանուն Ալլահի : Ասոնցմէ դատ, արարները ամէն տեղ մտցուցած են նաեւ իրենց հարէմական սովորոյթը : Թէեւ ձենկիլիսանը, Թիմուրլէնիը եւ Թրքական սուլթանները վերջ տուին արարներու քաղաքական տիրապետութեան, բայց անոնց բարոյական տիրապետութիւնը դեռ կը մնար : Այս տիրապետութեան է ահա, որ խոչոր հարուած կուտայ լատինական այբուբենը» :

Լատինական տառերու գործածութեան փորձերը՝ Միջին Ասիայի թրքո-թաթար երկիրներուն մէջ, անուղղակի ազդակի դերը խաղաղացին էնկիւրիի համար : Քեմալականները՝ քաղաքական եւ ազգային շահերու թէ թուրանականութեան զրգապատճառներով, ու նաեւ բարի նախանձի (emulation) զգացումներով, ուղեցին վճռական ու կտրուկ շարժիլ, ետ չմնալու համար ընդհանուր եւ արագաճեղ հոսանքէ մը :